ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 94-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետը, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ձևավորել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին կից հասարակական խորհուրդը և հաստատել դրա կազմը՝ համաձայն հավելվածի:

Արփինե Սարգսյան

23.12.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ ներքին գործերի նախարարի
«23» դեկտեմբերի 2025թ.
N 94 -Լ հրամանի

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին կից հասարակական խորհրդի անդամներ.

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյան (Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին կից հասարակական խորհրդի նախագահ),

2) «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության իրավապահ համակարգի բարեփոխումների խորհրդատու Հայկ Պետրոսյան,

3) Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի իրավական բաժնի համակարգող Անի Չատինյան,

4) Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի հիմնադիր և տնօրեն Ստյոպա Սաֆարյան,

5) «Ռազմավարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն Մկրտիչ Ավետիսյան,

6) «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության փոխնախագահ Ալլա Հարությունյան,

7) Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի «Արդարադատություն և մարդու իրավունքներ» ծրագրերի ղեկավար Արփի Հարությունյան,

8) «Երիտասարդական գաղափարներ» երիտասարդական հասարակական կազմակերպության նախագահ Շուշանիկ Սահակյան,

9) «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության փոխնախագահ Մարատ Ատովմյան,

10) «Կանանց իրավունքների տուն» հասարակական կազմակերպության նախագահ Կարինե Դավթյան,

11) «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ազգային տնօրեն Սպարտակ Սարգսյան,

12) «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության նախագահ Լուսինե Հակոբյան,

13) «Եռամիասնություն հանուն զարգացման» հասարակական կազմակերպության նախագահ Մամիկոն Խուրշուդյան,

14) «Պատվավոր հյուպատոսների միություն» հասարակական կազմակերպության հիմնադիր-նախագահ Բաբկեն Սեդրակյան,

15) «Այլընտրանքային փոխադրամիջոցների զարգացման» և «Հեծանվորդների, սիրողական հեծանվասպորտի և սպորտային տուրիզմի միջազգային ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունների հիմնադիր-նախագահ Արման Անտոնյան,

16) «Կյանքի աստղի միջազգային կոմիտե» միջազգային մարդասիրական հասարակական կազմակերպության գործադիր մարմնի ղեկավար Վլադիմիր Դաշյան,

17) «Բայազետ» կենտրոն հասարակական կազմակերպության համահիմնադիր, գլխավոր քարտուղար Վահրամ Հովեյան,

18) R5 արտակարգ իրավիճակների և անվտանգության նախագծերի կառավարման կենտրոնի հիմնադիր-տնօրեն Անի Տերտերյան,

19) «Տիգրան Աբգարյան» մարտական պատրաստության հայրենասիրական բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Ժորա Աբգարյան,

20) «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության իրավաբան Արա Ղարագյոզյան,

21) Տեխնիկական համագործակցության և զարգացման գործակալության Հայաստանյան մասնաճյուղի առանձնացված ստորաբաժանում ոչ առևտրային կազմակերպության փոխնախագահ Մարիա Հարությունյան,

22) Հայաստանի պետհիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների արհմիության կազմակերպական աշխատանքների և արտաքին կապերի մասնագետ, ԵՄ-ՀՀ քաղհասարակության պլատֆորմի անդամ Արսեն Իգիթյան: